

**ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հաստատում եմ»
ՎՊՄԻ ռեկտոր, ք.գ.դ. պրոֆեսոր

_____ Գ.Խաչատրյան

“ _03_ ” ___04_____ 2010թ.

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ**

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գլխադիրը
(արձանագրություն թիվ 3 “_03_” ___04_____ 2010թ.)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի մշակույթի կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն) ինստիտուտի կառուցվածքային ենթաստորաբաժանում է, որի հիմնական նպատակներն են ինստիտուտում գործող մշակույթի կառույցների աշխատանքներին աջակցումը, ՎՊՄԻ-ի շրջանակներում միջոցառումների համակարգումը, ուսանողության շրջանում գեղագիտական ճաշակի և որակի բարձրացումը:

1.2 Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրությանը, ՎՊՄԻ-ի կանոնադրության համապատասխան:

1.3 Կենտրոնն ունի ՎՊՄԻ-ի խորհրդանշանով ձևաթուղթ (պաշտոնաթուղթ):

1.4 Կենտրոնը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ՎՊՄԻ-ի ռեկտորի ներկայացմամբ՝ ՎՊՄԻ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

1.5 Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ՎՊՄԻ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

2. Խնդիրներն ու գործառույթները

2.1 Կենտրոնի խնդիրներն են.

2.1.1 ՎՊՄԻ-ի ուսանողների մշակութային ունակությունների զարգացման խթանում

2.1.2 Միջբուհական մշակութային կապերի ստեղծումը:

2.1.3 Ուսանողության շրջանում տաղանդավոր և շնորհալի ուսանողների հայտնաբերումը:

2.1.4 Ներինստիտուտային, արտաինստիտուտային և միջբուհական մշակութային միջոցառումների, փառատոների անցկացումը, համերգների և ներկայացումների կազմակերպումը:

2.1.5 Մշակութային թեմաներով դասախոսությունների, սեմինարների քննարկումների կազմակերպումը:

2.1.6 Ֆիլմերի, ներկայացումների, գեղարվեստական երկերի դիտումների և քննարկումների միջոցով ուսանողության մեջ գեղագիտական կողմնորոշման ձևավորումը:

2.2 Կենտրոնի գործառույթներն են.

2.2.1 Օժանդակում է ՎՊՄԻ-ի ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների նախաձեռնած մշակութային միջոցառումներին:

2.2.2 Կազմակերպում և իրականացնում է մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ փառատոներ, համերգներ, ցուցահանդեսներ, տոնական հանդիսություններ, ուսանողների հանդիպումներ մշակութային ոլորտի գործիչների հետ, քննարկումներ, ՎՊՄԻ-ի և այլ բուհերի մշակութային կյանքի զարգացման միտումների և օրինաչափությունների վերաբերյալ գեղագիտական դասախոսություններ, սեմինարներ, ֆիլմերի, ներկայացումների դիտումներ և այլ միջոցառումներ:

2.2.3 ՎՊՄԻ-ի մշակութային կյանքին ուսանողության ակտիվ մասնակցությունն ապահովելու, շնորհալի ուսանողներին հայտնաբերելու նպատակով ստեղծում է համույթներ, ակումբներ, խմբակներ, կազմակերպում է մրցույթներ, սահմանում է դրանց գործունեության կարգը:

2.2.4 Կենտրոնի խնդիրներն իրականացնելու նպատակով ՎՊՄԻ-ի ուսանողներից կազմում է կամավորների խմբեր, համակարգում է դրանց գործունեությունը:

2.2.5 ՎՊՄԻ դասախոսների և ուսանողների շրջանում անցկացնում է ՎՊՄԻ-ի մշակութային կյանքին վերաբերող սոցիոլոգիական հարցումներ, որոնց արդյունքում ՎՊՄԻ-ի ռեկտորատին, գիտական խորհրդին ներկայացնում է համապատասխան զեկույցներ և առաջարկություններ:

2.2.6 Համակարգում է պարային, երաժշտական, թատերական և այլ խմբակների ու համույթների գործունեությունը:

2.2.7 Համագործակցում է ինստիտուտի արհկումի և ուսանողական խորհրդի հետ:

3. Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը

3.1 Կենտրոնի աշխատանքների համակարգումը ՎՊՄԻ-ի ռեկտորի համապատասխան հրամանով վերապահվում է պրոռեկտորներին:

3.2 Կենտրոնն անմիջականորեն ղեկավարում է Կենտրոնի տնօրենը, որին պաշտոն նշանակում և պաշտոնից ազատում է ՎՊՄԻ-ի ռեկտորը: Կենտրոնի հաստիքացուցակ սահմանում է ՎՊՄԻ-ի ռեկտորը:

3.3 Կենտրոնի տնօրենը՝

3.3.1 կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում Կենտրոնի ընթացիկ գործունեությունը:

3.3.2 Ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում Կենտրոնի և այլ ստորաբաժանումների փոխհարաբերությունները,

3.3.3 Ստորագրում է Կենտրոնի անունից կազմված փաստաթղթերը, Կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ փաստաթղթեր,

3.3.4 Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված՝ կարող է հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության՝ ՎՊՄԻ-ի ռեկտորին կամ Կենտրոնի գործունեությունը համակարգող պրոռեկտորին ներկայացնել համապատասխան զեկույց և առաջարկություններ ՎՊՄԻ-ի՝ Կենտրոնի գործունեությանն առնչվող համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքների վերաբերյալ,

3.3.5 Պատասխանատվություն է կրում Կենտրոնի կողմից ղեկավարվող ստորաբաժանումների և առանձին աշխատակիցների ուժերով իրականացվող աշխատանքների որակի և առկա խնդիրների հնարավորինս պատշաճ ու արդյունավետ լուծման համար: